խանցել տալ կառավարական հաշուետուումարներու մէջ, և այդ հաշիւին մէկ մասը ուղղակի ելմտից նախարարութենէն գանձել. մէկ մասն ալ Երուսաղէմի սնտուկին վրայ փոխգիր ստանալ։ Յարութիւն պտրք. 1888ին ալ դեռ Պոլսէն Երուսաղէմ չմեկնած՝ նոյն հաւաքուած տուրքերէն 31,000 լիրայի հիվպիներ կ'ստանայ վճարուելու համար Հալէպի, Երուսաղէմի և Պէրութի կայս. սնտուկներէն. Յարութիւն պտրք. այս և այսպիսի խընդիրներուն պատճառաւ Պոլիս կը մնայ մինչև 1888, և կը մեկնի Պոլսէն 1889 Մայիս 10ին, արտասովոր հանդէսով. Մայիս 20ին Երկրորդ Ծաղկազարդին փառաւոր հանդէսով կը մտնէ Երուսաղէմ. իր ուխտը կը կատարէ և կը բազմի Ս. Յակոբի Աթոռը և Մայիս 30ին կ'սկսի վարչական գործերու։ Աթոռական գործերու կարգադրութեան համար կ'ստիպուի ուղեորիլ Պոլիս 1893ին, և 1894ի սկիզբը Ս. Յակոբ կը վերադառնայ։ Կը վախճանի 1910ին և կը թաղուի ի չարս պատրիարքաց Ս. Փրկչի վանքի մէջ։ Ի նպաստ Ս. Յակոբի իր անձնական ծախքով մըթերանոցներ շինել տուած է Յոպպէի և Երուսաղէմի մէջ, ինչպէս նաև մեծ և հոյակապ հիւրանոց մը որ այժմ կը կոչուի Վեհաշէն, որուն արդէն վերջ ակնարկեցինք։ Յարութիւն պտրք. դարձեալ իր ծախքով շինել տուած է Ս. Փրկչի վանքին պարիսպները. ինչպէս նաև Ս. Թորոս եկեղեցիին մէջ հաստատած է Ս. Յակոբի ձեռագիրներու մասնաւոր դարակները։ Տեսնել իր ընդարձակ կենսագրութիւնը (Արամ. 1887)։

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍՐԿ. ԳՈՆԻԱՑԻ.— Մբ. 1822ին. Ս. Յակոբի վանքին մէջ կ'ընդօրինակէ Աղբիւր բացեալ ձեռագիրը (ՄՁ. Թ. 178Ը)։

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍՐԿ. ԷՔՍԷՐՃԵԱՆ, ՊՈԼՍԵՑԻ. — Ձեռագիր Տաղարանի մը մէջ (Տաշ. Ցուց. Թ. 514) Յարութիւն սրկ. կը յիշատակուի այսպէս. «Յարութիւն սարկաւագ Սրբոյ Երուսաղէմի Էքսէրճեան Բիւզանդացւոյ»։ Նոյն Տաղարանին մէջ (էջ 986) յիշեալ սարկաւագը ունի զանազան քերթուածներ։ Յարութիւն սարկաւագ Մինաս Ամդեցիէն սարկաւագ ձեռնադրուած է (Զամչ. Գ. 748) ինչպէս կը հասկցուի հետեւեալ տողերէն. «Սորա (Մինաս Պե.) սարկաւագ էր Յարութիւն Բիւզանդացի. Էքսէրճի օղլու ասացեալ. այր բազմահանճար. որ